ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«___» 01 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 02

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
Ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***Տավուշի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Տավուշ-6) շրջանակում, Իջևան քաղաքի 2006թ. գլխավոր հատակագծի լրամշակված շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 02

<<18>> 01 2019թ.

Տավուշի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Տավուշ-6) շրջանակում, Իջևան քաղաքի 2006թ. գլխավոր հատակագծի լրամշակված շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝
- Հիմադրույթային փաստաթուղթ.
- ազդեցության ռազմավարական գնահատման (ՌԳ) հաշվետվություն,
- գծագրական նյութեր:

Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծի փոփոխության համար հիմք է հանդիսացել քաղաքաշինության նախարարության 10.01.2017թ. N06/11.2/20-17 գրությունը, ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N122 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը համարում է սոցիալական և տնտեսական զարգացման հիմնախնդիրների լուծման խթանիչներից, իսկ բնակավայրերի զարգացումը՝ գերակա ուղղություն: Տավուշ-6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (ՄՄՀՏՊՓ) հիմնական նպատակն է մշակել միկրոռեգիոնում ներառված՝ այդ թվում նաև Իջևան քաղաքը, համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթուղթ, որը ներառում է.

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի բացահայտումն ու վերլուծությունը,
- առաջնային կենսապահովման համար անհրաժեշտ խնդիրները ձևակերպումը,
- համայնքի համար հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի ստեղծումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու ձևակերպումը:

ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 30-ի N1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագի /որի գործողության ժամկետը նախատեսված էր

մինչև 2021 թվականի վերջը/ տեխնիկատնտեսական հիմնական ցուցանիշներն, ինչպես նաև տարածքային զարգացման համար նշված ուղղություններն իբրև հենակետային տվյալներ պետք է հիմք ծառայեին «Տավուշ-6 ՄՄՀՏՊՓ մշակումների համար: Մասնավորապես այն վերաբերում էր Իջևան համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի օգտագործմանը և նպատակային նշանակությունների փոփոխություններին: Սակայն սույն նախագծային մշակումների ընթացքում բացահայտվել են նշված փաստաթղթի անբավարար և անհստակ բովանդակությունը, ելակետային և նախագծային առանձին մասերի միջև էական և հիմնարար անհամապատասխանությունը: Լրամշակման արդյունքում պարզվել է, որ անտառային հողերի ցուցանիշը 1693.66հա է, որը 210.0հա-ով ավելի է քան Իջևանի 2006թ. գլխավոր հատակագծի ցուցանիշներում ամրագրված՝ 1483.0հա, ցուցանիշը:

Իջևանի 2006թ. գլխավոր հատակագծի ելակետային և նախագծային ցուցանիշներն, ինչպես նաև տեքստային և գրաֆիկիական մասերի միջև բացահայտված անհամապատասխանությունները հիմք հանդիսացան ձեռնարկելու Իջևան քաղաքի գլխավոր հատակագծի արմատական լրամշակում, որով առաջարկվել է հետևյալ լուծումները:

1. Իջևանի տարածքի հյուսիս-արևելյան մասում գտնվող քոթեջային կառուցապատման համար առաջարկվող 5-րդ թաղամասի նախագծային լուծման ճշգրտում՝ օգտագործելով տնամերձ հողամասերն անհատական տների կառուցապատման նպատակով: Գոտիավորման նախագծում, հաշվի է առնվել նաև թաղամասի միջով անցնող 110կՎ էլեկտրահաղորդման օդային ցանցի հետագիծը:
2. Իջևան քաղաքում տասնյակ տարիներ առաջ ձեռնարկվել էր ճոպանուղու շինարարություն, որը մնացել է անավարտ: Նկատի առնելով քաղաքի սոցիալական և տնտեսական զարգացման համար այդ կառույցի կարևոր նշանակությունը, ճոպանուղու վերին կայանին հարակից տարածքի համար, սույն նախագծային աշխատանքների կազմում մշակվել է <<Երազանք>> անվանումով հանգստի և զբոսաշրջության համալիր տարածքի Գոտիավորման նախագիծ:
3. Տարածքային զարգացման ուղղությունների ընտրության հատակագծում նշվել են. Մ-4 ավտոմայրուղու ճանապարհամերձ և Իջևանի կենտրոնական հատվածի 60-80-ական թվականներին իրականացված, պատմամշակութային նշանակություն և գեղագիտական արժեքներ ունեցող տարածքները՝ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ ճանաչելու նպատակով:

Իջևանի բնակավայրի, ձևավորմանը խթանել է Աղստև գետի ափամերձ մասերով հնագույն ժամանակից անցնող ճանապարհը, ինչպես նաև հանգույց հանդիսանալով ճամփորդների համար հանգրվանելու կամ իջևանելու փաստը:

Գտնվելով Աղստև գետի հովտում՝ հանրապետության հյուսիս-արևելքում, Իջևանը հանդիսանում է Տավուշի մարզի վարչական, կրթական, մշակութային կենտրոնը: Համայնքը զբաղեցնում է 2767.0հա տարածք: Հատակագծման սկզբունքով այն քաղաք-պարտեզ է, կենտրոնական մասը կանաչապատված է տնկովի փշատերև և լայնատերև ծառերով, իսկ քաղաքի արվարձանները շրջապատված են անտառածածկ լանջերով:

Քաղաքն իր աշխարհագրական դիրքի /650-850մ ծ.մ./ և բնակլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ անցյալ դարի 60-ական թվականներից սկսել է բազմակողմանի զարգանալ: Այստեղ կառուցվել են մի շարք արտադրական ձեռնարկություններ, հասարակական շենքեր, տուրիստական համալիր հանգրվան, ինը հարկանի հյուրանոց, բացի այդ հիմնվել է բուսաբանական այգի: 1991թ.-ին Իջևանը ստացել է առողջարանի կարգավիճակ: Կառուցվել է <<Սպիտակ լիճ>> ջրամբարն իր հանգստյան գոտով: Ձեռնարկվել է ճոպանուղու շինարարություն, կառուցվել են ներքին և

վերին կայանաշենքերը, սակայն ճոպանուղու կառուցումը մնացել է անավարտ: Իջևան համայնքի բնակչությունը 2016թ. տվյալներով կազմել է 18920 մարդ, որից 9058 տղամարդ, 9862 կին, իսկ տնային տնտեսությունների թիվը՝ 5094 է: Ընտանիքի անդամների միջին թիվը կազմում է 3.71 մարդ:

20-րդ դարի 80-ական թվականների վերջից՝ քսանվեց տարի շարունակ, քաղաքի տարածքային զարգացումը չի ունեցել հստակ և հիմնավորված քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ: Արդյունքում քաղաքաշինական գործունեությունը ծավալվել է առանց հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերի, մինչև 2006 թվականը:

Քաղաքի կարգավիճակ ստանալուց հետո Իջևանի համար մշակվել են մի շարք տարածական պլանավորման փաստաթղթեր, որոնց շնորհիվ, հատակագծային բարեփոխումների արդյունքում քաղաքի կենտրոնական հատվածը ձեռք է բերել տարածական կարգավորման որոշակի հստակություն:

Աղստև գետը և միջպետական ավտոմայրուղին քաղաքի տարածքը բաժանում են արևմտյան և արևելյան հատվածների: Ռելիեֆի բնույթը իր արտահայտիչ ազդեցությամբ էական տարբերություն է ստեղծում երկու հատվածների հատկագծային կառուցվածքում:

Արևմտյան հատվածում, որտեղով անցնում է միջպետական ավտոմայրուղին, նեղ, մինչև 50.0մ լայնությամբ շերտում առաջացել է քաղաքի հասարակական կառուցապատման մի հատված: Այստեղ կառուցվել են Իջևանի քաղաքապետարանը, կապի հանգույցը, ոստիկանության շենքերը, ավելի ուշ՝ նաև քաղաքային շուկան և ծավալով փոքր այլ կառույցներ: Արևմտյան հատվածի թեք լանջերի վրա հիմնականում անհատական բնակելի տներով, տնամերձ հողամասերով կառուցապատում է: Քսաներորդ դարի վաթսունական թվականների վերջին, թեք լանջին ուղղահայաց դիրքով կառուցվել է ինը հարկանի հյուրանոցի շենքը: Այդ ժամանակաշրջանում Հայաստանի ճարտարապետության և շինարարության ոլորտի գերակա խնդիրներից էր մեծ թեքության լանջերի կառուցապատումը: Արևելյան հատվածի Աղստև գետի աջափնյա ռելիեֆի հարթ հատվածում փողոցային ցանցն ու կառուցապատումը կանոնավոր բնույթ ունեն: Այս հատվածի հիմնական կառուցապատման մեջ կան հասարակական նշանակության և բնակելի 2-3 հարկանի բազմաբնակարան շենքեր, իսկ կանաչապատումն իրականացված է ծառերի և թփերի տնկարկումով: Փողոցները և մայթերն ունեն կարծր ծածկույթ, արտաքին լուսավորություն և կանոնավոր ինժեներական կահավորում: Աղստև գետի երկու ափերը ողողումներից պաշտպանված են հենապատերով: Քաղաքի ամբողջ կենտրոնական մասի առափնյա հատվածները կանաչապատված են ինչպես փշատերև, այնպես էլ սաղարթավոր ծառատեսակներով:

Քսաներորդ դարի 70-80-ական թվականների ընթացքում Իջևանի կենտրոնական կանաչապատված մասում իրականացվել է տարածքի բարեկարգում: Քանդակագործական մի շարք սիմպոզիումների կազմակերպման շնորհիվ քաղաքում տեղադրվել են բազմաթիվ քանդակներ, շվաքարաններ, զրուցարաններ, բացօթյա սրճարաններ և այլն:

Քաղաքաշինական և գեղագիտական արժեք ունեցող այս հատվածում անհրաժեշտ է սահմանել քաղաքաշինական հատուկ կարգավորման ռեժիմ, մեծ ուշադրություն դարձնելով նաև պատմամշակութային ժառանգության պահպանման հարցերին: Նույնպիսի ռեժիմ պետք է սահմանել նաև Աղստև գետի առափնյա և Մ-4 ավտոմայրուղու ճանապարհամերձ շերտում:

Պատմության և մշակույթի հուշարձաններ կան քաղաքի տարածքի տարբեր հատվածներում, իսկ կենտրոնական հատվածի կառուցապատման մեջ մեծ թիվ են

կազմում քաղաքային և մարզային նշանակության վարչական, սոցիալական, մշակութային, կրոնական և մարզական կառույցները:

Քաղաքի արևմտյան և արևելյան հատվածներն իրար կապվում են Աղստև գետի վրա տրանսպորտային և հետիոտն շարժման համար կառուցված կամուրջներով:

Աղստև գետին և Մ-4 ավտոմայրուղուն հարող հյուսիսային հատվածն զբաղեցնում է արդյունաբերական կառուցապատումը, որի կազմում մեծ հողամասեր զբաղեցնող արտադրական և կոմունալ ծառայությունների ձեռնարկություններ են:

Տարածքային զարգացման ուղղությունների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տարածքների ինժեներաերկրաբանական պայմանների, ինչպես նաև տարածքի սեյսմամիկրոշրջանացման հետազոտությունների եզրակացությունները, հաշվետվությունները և քարտեզները: Հետազոտությունների և քարտեզների հիման վրա ընտրվել և <<Տարածքի համալիր գնահատում. Ռիսկերի և սահմանափակումների ուրվագծեր>> գծագրական մասում ամրագրվել են կառուցապատման համար բարենպաստ, սահմանափակ կամ պայմանական բարենպաստ և անբարենպաստ տարածքները:

Իջևանի տարածքային զարգացման ընտրությունը հատակագծային կառուցվածքի որևէ փոփոխություն չի նախատեսում: Բնակավայրի տարածքային զարգացման համար նախատեսվող հողամասերն ընտրվել են առավելապես գյուղատնտեսական ոչ արժեքավոր հողերից՝ անօգտագործելի և այլ հողատեսքերից: Հնարավոր նվազագույն չափով հանգստի կազմակերպման համար առաջարկվել է անտառային հողերի՝ ծառերից զուրկ բացատների տարածքները:

Սկսած 20-րդ դարի 90-ական թվականներից մինչև 2006թ. գլխավոր հատակագծի հաստատումը Իջևանում շարունակվել են տարածքային զարգացման տարբեր նպատակային նշանակության հողերի իրացման գործողություններ: Հաշվի առնելով, որ քաղաքը շրջապատված է անտառներով, իրացմանը ենթարկվել են նաև 20-րդ դարի 90-ական թվականներին ծառահատված անտառային տարածքները:

Համաձայն Իջևանի 2006թ.-ի գլխավոր հատակագծի գործողության ժամանակաշրջանում Իջևանի քաղաքապետարանի կողմից փորձեր է արվել անդրադառնալու գլխավոր հատակագծի վերամշակման կամ լրամշակմանը, սակայն այն չի իրագործվել մինչև 2017թ.: Այդ ժամանակաշրջանում կատարվել են առանձին մասնակի փոփոխություններ:

Այս սխեմաների միջոցով բացահայտվել է Իջևանի 2006թ. գլխավոր հատակագծի տեքստում բերված ցուցանիշների և գրաֆիկական մասերի միջև տեղ գտած անճշտությունները:

Վերը նշվածը հիմք է հանդիսացել «Տավուշ-6 ՄՄՀՏՊՓ մշակման շրջանակներում արմատապես վերանայել և ճշգրտել Իջևանի 2006թ. գլխավոր հատակագծի հետևյալ մասերը, մասնավորապես՝ տարածքային զարգացման ուղղությունները, հողերի նպատակային նշանակության առկայությունը և բաշխումն, ելակետային և նախագծային ցուցանիշները:

Վերանայման և շտկումների կատարման գործընթացը նպատակաուղղված է Իջևանի 2006թ.-ի գլխավոր հատակագծում ընդունված տարածքային հատվածների իրացումը շաղկապելու Իջևանի քաղաքի վարչական սահմաններում տարիներ շարունակ ձևավորված իրադրությանը, ինչպես նաև համապատասխանեցնելու հողային ֆոնդի առկայության և բաշխման 2005թ. և 2016թ. հաշվետվություններին (ՀԱ N 22) ցուցանիշներին, որոնք ներկայացված են աղյուսակում:

Հողերի նպատակային նշանակությունը		Իջևանի 2006 թ. գլխավոր հատակագծի լրամշակման ցուցանիշներ 4* և 5*«Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառային հողերի սահմանների հետ համապատասխանեցումը հաշվի առնելով		
		առկա	Նախագծային	ավելացացում կամ (-) նվազում
1	2	3	4*	5*
1	Բնակավայրի հողեր	562.68	635.24	72.56
2	Արդյունաբեության, ...	60.87	60.41	-0.46
3	Էներգետիկայի, ...	64.21	62.25	-1.96
4	Հատուկ պահպանվող	31.05	39.18	8.13
5	Հատուկ նշանակության	12.28	12.28	0
6	Գյուղատնտեսության	156.02	172.76	16.74
7	Անտառային	1832.82	1737.81	-95.01
8	Ջրային	48.80	48.80	0
	Ընդամենը	2768.73		0

«Տավուշ-6 ՄՄՀՏՊՓ մշակումների կազմում, Իջևան քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման շրջանակներում վերանայվել է բնակչության հեռանկարային /հաշվարկային/ ցուցանիշը: Վերակազմվել է հենակետային և տարածքային զարգացման ուղղությունների ընտրության հատակագծերը, ամրագրվեց տարածքային զարգացման առաջնահերթ և միջնաժամկետ փուլերի ընթացքում Իջևանի տարածքներում կատարված Հողերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունները: Ճշգրտվել է Տարածքային զարգացման հաշվեկշիռը, կատարվել է բնակչության սոցիալական և կենցաղային սպասարկման համակարգերի վերահաշվարկ, ինժեներական ենթակառուցվածքների վերաբերող նախագծային հաշվարկները, ներկայացվել է Գլխավոր հատակագծի տեխնիկատնտեսական հիմնական ցուցանիշների աղյուսակը: Մշակվել է շրջակա միջավայրի բարելավման ու պահպանության, ինչպես նաև արտակարգ իրավիճակում քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումներ բաժինները:

Իջևան քաղաքի տարածքային զարգացման «Տավուշ-6 ՄՄՀՏՊՓ մշակումների շրջանակներում ամրագրված անտառային հողերի նվազումը 1990թ.-ից մինչև 2017թ. ստույգ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթի բացակայության հետևանք է: Անտառային նպատակային նշանակության հողերի սահմաններում ամրագրված ծառազուրկ հատվածների քաղաքաշինության համար իրացումը առաջին հերթին նպատակաուղղված է բնակչության կենսագործունեության առաջնային կարիքներից ամենակարևորի՝ բնակարանային պայմանների բավարարմանը: Իրացված անտառային հողերից զգալի մասը տրամադրվել է նաև գյուղատնտեսական հողատեսքերի ստեղծման, քաղաքային գերեզմանոցի տարածքի ընդլայնման, քաղաքի տնտեսական զարգացման պայմանների բարելավմանը նպաստող հանգստի և զբոսաշրջային ոլորտի զարգացման նպատակներով:

Լրամշակման արդյունքում Իջևանի տարածքային զարգացման ուղղությունների փոփոխություններն են.

Գյուղատնտեսության հողերից վարելահողը ավելանում է 30.92հա,

Բնակավայրերի հողերից ավելանում է՝

-բնակելի կառուցապատման տարածքը - 69.81հա,

-հասարակական կառուցապատման տարածքը - 8.36հա,

-ընդհանուր օգտագործման տարածքներից զբոսայգիները - 8.1հա:

Հատուկ պահպանվող տարածքները ավելանում են 31.68հա, այդ թվում հանգստի՝ 20.79հա:

Իջևան քաղաքը ներկա վիճակում հիմնականում պահպանում է իր միջավայրում կանաչապատված և բարեկարգ տարածքների բաժինը: Այդպես ընդհանուր և սահմանափակ օգտագործման, ինչպես նաև հատուկ նշանակության կանաչապատ տարածքների գումարով մեկ բնակչին հասնող բաժինը մոտենում է 30.0մ²-ին:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված հիմնադրույթային փաստաթղթի փորձաքննության արդյունքները, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, անտառային կոմիտեի 29.06.2018թ. N1-09/117 և 25.12.2018թ. N1-09/543ՀՀ գրությունները, առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների կարծիքները, Իջևանի համայքապետարանում իրականացված հանրային քննարկումները կարելի է անել հետևյալ եզրահանգումներ.

2018թ. դեկտեմբերի 12-ին Իջևանի համայնքապետարանում կատարված Իջևան քաղաքի (բնակավայրի) լրամշակված գլխավոր հատակագծի (Տավուշ-6) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների ժամանակ, որպես հիմնախնդիր՝ համայնքի ղեկավարության կողմից, հարց բարձրացվեց ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 30-ին N 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի (բնակավայրի) գլխ. հատակագծի նախագծի ճշգրտման և լրամշակման շրջանակներում 80-ական թվականներին կառուցված ճոպանուղու վերին կայանով ծանրաբեռնված տարածքը և քաղաքից դեպի կայան տանող ճանապարհամերձ հատվածը՝ մոտ 20.0հա, անտառային հողերի կատեգորիայից հատուկ պահպանվող հողերի նպատակային նշանակության կատեգորիա փոխադրել՝ հանգստի և զբոսաշրջության գոտի կազմակերպելու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված 20.0հա անտառային հողերի հիմնական մասը ծառապատված է, որտեղ նախատեսված են նաև անտառբարելավման աշխատանքներ, իսկ մնացած ծառազուրկ տարածքները առաջիկա տարիներին լայնածավալ անտառապատման համար են նախատեսված: Միաժամանակ Հայաստանի Հանրապետության 2015թ. ստանձնած միջազգային պարտավորության համաձայն մինչև 2050թ. Երկրի անտառապատվածությունը ներկայիս 11.2% փոխարեն պետք է հասցվի օպտիմալ 20.1%-ի (ՀՀ կառավարության 10.09.2015թ. N 4 արձանագրային որոշում): Անտառային կոմիտեն գտնում էր ոչ նպատակահարմար անտառային հողերի նպատակային նշանակության փոփոխությունը:

2017թ.-ի <<Իջևանի անտառտնտեսություն>> մասնաճյուղում իրականացվել է անտառային հողերի քարտեզագրման և անտառկառավարման պլանի կազմման աշխատանքների արդյունքների համադրություն Իջևան քաղաքի լրամշակված հատակագծով նախատեսվող անտառային հողերի նպատակային նշանակության փոփոխությունների հետ: Աշխատանքի արդյունքում համաձայնություն է տրվել սեփականության իրավունքի պետական գրանցում ունեցող հողատարածքների առնչությամբ և անտառային հողատեսքի՝ միայն 95.01հա-ի նպատակային նշանակության փոփոխությանը:

<<Տավուշ-6>> ՄՄՀՏՊՓ մշակումների կազմում, Իջևան քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման շրջանակներում վերանայվել է բնակչության հեռանկարային /հաշվարկային/ ցուցանիշը: Վերակազմվել է Հենակետային և Տարածքային զարգացման ուղղությունների ընտրության հատակագծերը, ամրագրվել տարածքային զարգացման առաջնահերթ և միջնաժամկետ փուլերի ընթացքում Իջևանի տարածքներում կատարված

Հողերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունները: Ճշգրտվել է Տարածքային զարգացման հաշվեկշիռը, կատարվել Բնակչության սոցիալական և կենցաղային սպասարկման համակարգերի վերահաշվարկ, Ինժեներական ենթակառուցվածքների վերաբերող նախագծային հաշվարկներ, կազմվել և ներկայացվել է Գլխավոր հատակագծի տեխնիկատնտեսական հիմնական ցուցանիշների աղյուսակը: Մշակվել է շրջակա միջավայրի բարելավման ու պահպանության, ինչպես նաև արտակարգ իրավիճակում քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումներ բաժինները:

Փորձաքննական պահանջներ

1. Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
2. Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում անհրաժեշտ է կատարել մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայնախագիծ>> ԲԲԸ կողմից ներկայացված Տավուշի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Տավուշ-6) շրջանակում, Իջևան քաղաքի 2006թ. գլխավոր հատակագծի լրամշակված շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ Կ. Մովսիսյան